

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿՆՔՎԱԾ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1997 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ
ՓԱՐԻՉՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ "ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԶԿՃԱՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ" ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երեւան, 3 փետրվարի 2004 թ.

Հարգելի պարոն դեսպան,

Պատիվ ունեմ վկայակոչել Ձեր 2003 թվականի փետրվարի 5-ի թիվ 35/CD/AL
հայտագիրը, որի բովանդակությունը հետևյալն է.

"Հարգելի պարոն Նախարար,

Հղում կատարելով Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ֆրանսիայի
Հանրապետության կառավարության միջեւ 1997 թ. դեկտեմբերի 9-ին Փարիզում
ստորագրված "Եկամտահարկի եւ գույքահարկի առնչությամբ կրկնակի հարկումը
բացառելու եւ հարկային խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին"
համաձայնագրին՝ պատիվ ունեմ իմ կառավարության հանձնարարությամբ Ձեզ
առաջարկելու կրկնակի հարկումների վերացման մասին 23-րդ հոդվածի 1 A) ii) կետը
փոխարինել հետևյալ կետով.

ii) 7-րդ հոդվածում եւ 13-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված

Ֆրանսիական ընկերությունների հարկին ենթակա եկամտի առնչությամբ, եւ 10-րդ
հոդվածում, 11-րդ հոդվածի 2-րդ կետում, 12-րդ հոդվածի 2-րդ կետում, 15-րդ
հոդվածի 4-րդ կետում, 16-րդ հոդվածում եւ 17-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում
նշված եկամտի առնչությամբ՝ Հայաստանում վճարված հարկի գումարին այդ հոդվածների
դրույթներին համապատասխան. սակայն այդ հարկային հաշվանցումը չպետք է գերազանցի
այդ եկամտին համապատասխանող ֆրանսիական հարկի գումարը:

1 C) ii) կետը փոխարինել հետևյալ կետով.

"ii) պայմանավորված է, որ "Հայաստանում վճարված հարկի գումար"

արտահայտությունը "a" եւ "b" ենթակետերում օգտագործելիս նշանակում է հայկական
հարկի գումար, գործնականորեն վճարված այնտեղ՝ Համաձայնագրի դրույթներին
համապատասխան, վերջնականորեն դիտարկվող եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ
Ֆրանսիայի ռեզիդենտ հանդիսացող այդ եկամտի կամ գույքի տարրերի փաստացի
սեփականատիրոջ կողմից":

Երախտապարտ կլինեմ Ձեզ Հայաստանի կառավարության կողմից առաջարկությունն
ընդունվելու դեպքում ինձ իրազեկելու համար: Այդ դեպքում սույն հայտագիրը,
ինչպես նաեւ Ձեր պատասխանը կնշանակեն այս կետի շուրջ երկու կառավարությունների
համաձայնությունը: Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու համար, յուրաքանչյուր
կողմ կհայտագրի մյուսին անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին:
Վերջինս ուժի մեջ կմտնի վերջին հայտագրման ստացման օրվանից":

Ընդունեք խնդրեմ, պարոն նախարար, հարգանքներիս գերագույն հավաստիքը:"

Պարոն Անրի Զյունի

Հայաստանում Ֆրանսիայի Դեսպան

Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնել, որ Ձեր հայտագրում նշված առաջարկությունն
ընդունելի է Հայաստանի կառավարության համար: Ձեր հայտագիրը եւ սույն պատասխանը
կկազմեն համաձայնագիր մեր երկու կառավարությունների միջեւ, որն ուժի մեջ կմտնի
դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման
մասին ծանուցումներից վերջինի ստացման օրը:

Ընդունեք, խնդրեմ, պարոն դեսպան, իմ խորին հարգանքի հավաստիքը:

Վարդան Օսկանյան

Հայտագրերի փոխանակմամբ կնքված համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ.
դեկտեմբերի 7-ից: